

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ

10) Ի՞նչ է ընդհանրական մկրտութիւնը:

Երբ խումբերով եւ մեծ թիւով մարդիկ կը մկրտուին մկրտութեան մէկ արարողութեան ժամանակ: Օրին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի կողմէ արքայական ընտանիքի եւ ժողովուրդի մկրտութիւնը: Ընդհանրական Ս. մկրտութիւններ տեղի ունեցան նաեւ խորհրդային կարգերու փլուզումէն ետք, երբ բազում մարդիկ, հայորդիներ հոգեւոր վերազարթօնք կ'ապրէին, մկրտուեցան եւ քրիստոնեայ դարձան: Նմանատիպ մկրտութիւններէն է հայոց մեծ դարձի 1700-ամեակի նախասեմին 1999 թուականին ծավ գետի (Հայաստան) մէջ կատարուածը, երբ հազարէ աւելի երեխաներ եւ չափահասներ մկրտուեցան:

Այսօր Հայաստանի մէջ երբեմն ընդհանրական մկրտութիւններ կը կատարուին բանակին մէջ:

11) Որո՞նք են Ս. մկրտութեան և ախտատիպերը իին կտակարանին մէջ:

Ինչպէս ընդհանրական, այնպէս ալ մեր եկեղեցւոյ հայրերը, հին կտակարանի որոշ դրուազներու մէջ տեսած եւ բացայայտած են Ս. մկրտութեան թագնուած խորհուրդը: Անոնցմէ են՝ *

* Արարչագործութեան ժամանակ ջուրերու վրայ Ս. Հոգիին արձիւ (Ծննդ. 1/2)- խորհրդապատկերն է Ս. մկրտութեան:

ԱՊԱՆԴԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ


ԲԱՍԵԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՍ ՊԱՏՄԱԿԱՆՔ 6-ԿԻՆԸ ԵՒ ԱՍՏՈՒՄԱՄԱՑՐԸ

Աստուծոյ Որդին ամօթ ու նուաստութիւն չհամարեց «կնոջմէ մը» ծնիլ (Գաղ. 4.4) եւ մարդոց հաւասարութիւնը յայտարարեց, իսկ Քրիստոսի առաքեալը՝ Պողոս կ'ըսէ, թէ Քրիստոսի միացած անձերուն մէջ «Ալ ո՛չ հրեայ կայ, ոչ ալ յոյն, ո՛չ արու կայ եւ ոչ ալ էգ, որովհետեւ դուք ամենքդ ալ Մէկ էք Քրիստոս Յիսուսով» (Գաղ. 3.28): Իսկ ինչ, որ Աստուած հաւասար կը յայտարարէ մարդիկ չեն կրթար ստորադասդարնել:

Գալով «Աստուածամայր» կոչումին նիշդ է, որ Աստուածաշունչին մէջ չկայ այդ անուանումը, բայց այն անձը, որ նշմարտապէս կը նանշնայ Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոսը, իբրև կատարեալ եւ յաւէտ օրինեալ Աստուած՝ անոր համար «Ս.ԱՏՈՒԱԾԱՄԱՅՐ» կոչումը ամենապատշաճ եւ ամենէն արժանի կոչումն է տրուած այն օրինեալ կնոջ՝ Մարիամին, որ ծնունդ տուաւ մեր Փրկիչ Աստուծոյն:

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտորել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԵ.



ԲՈՒ ԽՈՍՔԻ ԻՄ ՈՅԵՐՈՒՄ ՏՐԱԳ Է ՈՒ Խ ԾԱՌԻՆԵՐՈՒՄ ԼՈՅ
(Ս. 119.105)

ԺԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 10 ՅՈՒՆԻ 2018

ԹԻՒ 23

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒՄԱՌԱՉՎԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես 1.2-15: Յև 6.12-23:
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՎԸ ԸՆ ՄԱՏԹԵՈՍԻ 12.1-8

Շաբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր: Աշակերտները անօթեցած լլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, լսին Յիսուսի. «Տե՛ս, աշակետներդ ի՞նչ կ'ընեն. քան մը՝ որ արգիլուած է Շաբաթ օրով ընել»:

Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած թէ ի՞նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չնտա՞ւ եւ Առաջաւրութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շաբաթ օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբադեն Շաբաթը եւ սակայն ատիկա մեղք չի համարուիր իրենց: Ահա կ'ըսէմ ձեզի, որ տաճարէն աւելի մեծ մէկը կայ հնս: Եթէ իրապէս հասկնայիք, թէ ի՞նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ թէ զնի», այն ատեն չէիք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տերն է Շաբաթին»:

Աստուծոյ փառքին համար ծառայողը միշտ պէտք է ծառայէ առանց ժամանակ սահմանելու կամ օր նշանակելու: Բարիք ընելը այս աշխարհին վրայ արգիլուած եւ արտօնուած օրեր չունի, այլ՝ երբ անհրաժեշտ է, որ մենք ուրիշին օգտակար դառնանեմ, նոյնիսկ այդ օրը արձակուրդի կամ հանգիստի օր ըլլայ, պէտք է օգնենեմ: Բոլորս կոչուած ենք ծառայելու: Ծառայենք, բարիք գործենք, կամ չքաւորին օգտակար դառնանեմ, որպէսզի Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարգևեր լիովին կատարենք: Մեր կեանքը միշտ ապրինք Աստուծոյ համար:

ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՀԱՅՈՑ ՄՐՏԻ ԼՈՒՍԱԾՈՐԻՉ
ՄԵԾՆ ՆԵՐՄԵՍ ՀԱՅՐԱՊԵՏ



Ներսէս Հայրապետ կաթողիկոս ձեռնադրուեցաւ 353 թուականին, Արշակ Բ. քագաւորի օրով: Ան քագաւորին ժամանակ էր, սակայն Փառնէն Աշտիշատեցի կաթողիկոսի մահէն ետք բափուր մնացած հայրապետական աթոռին համար արժանաւոր մէկը պէտք էր ընտրել: Այս արժանաւոր անձը հանդիսացաւ Յուսիկ Հայրապետի քոռո՞ Ներսէս:

Պատմութիւնը Ներսէս Հայրապետին ընծայած է ՄԵՇ Տիտղոսը իր կատարած մեծ գործերուն եւ բարեկարգութիւններուն համար: Հիմնական նպատակն էր հայ ժողովուրդի սրտին մէջ քրիստոնէական ազնիւ գգացումները ներմուծել եւ արմատացնել: Այսպէս օրինակ կը բաշալերէր իր ժողովուրդը, որ հեթանոսական սովորութեամբ մահան առջեւ չողբան, այլ՝ յարութեան յոյսը ի մտի ունենալով երկինքի արքայութեան հաւատան: Անդադար կը բաշալերէր, որ մարդիկ բարեգործութեան ետեւէն ըլլան եւ օրինակը ինքն իսկ տալով, իր տան մէջ կը հոգար որբերն ու չքաւորները:

Մեծն Ներսէս կաթողիկոս իր պաշտօնին գլխուն անցնելով մեծ բարեկարգութիւններու ձեռնարկեց:

Անհամար վանքերու, դպրոցներու, որբանցներու հիմնադրութիւնը իր աշխատանքին մէկ բաժինն էր:

Ան կազմակերպեց հայ եկեղեցական դասը, քահանաներ, եպիսկոպոսներ եւ քարոզիչներ ամէն կողմէ դրկելով: Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ որոշ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործադրութեան համար:

Ահա իր այս բարեսիրական գործերուն շնորհիւ է, որ ան դարձաւ Հայոց սրտի լուսաւորիչ:

Հայ եկեղեցոյ տօնացոյցին համաձայն, Ներսէս Հայրապետին տօնը կը գուգադիպի Շաբաթ՝ 9 Յունիս, 2018-ին:

Ի՞ՆՉ ԸՆԵԼ Է ԱՌԱՋԻՆ ՄԵՂՔ

Կը սորվինք Սուլք Գիրքէն, թէ Աղամ չպահեց աստուածային պատուէրը իր դրախտային կեանքին մէջ: Այս պատուիրանազանցութիւնը կամ անհնազանդութիւնը ըստ աստուածաբաններու կը կոչուի առաջին (սկզբնական) մեղք, որ Աղամէն ժառանգաբար անցած է սերունդէ սերունդ բոլոր մարդոց:

Գրիգոր Տարեւացին այսպէս կը սահմանէ այդ մեղքը. «Աղամին մեղքը այն է, որ կորսնցուց արդարութիւնը եւ մեղքով ու ցանկութեամբ ծնաւ իր որդին, այս է սկզբնական մեղք ըսուածը, որ չի քաւուիր, եթէ չմկրտուի քրիստոսի մահով»:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՄԵԶ ԵՄ

Յիսուս Սուլք Հոգիով լեցուած՝ վերադարձաւ Յորդանանեն: Ապա Սուլք Հոգիին կողմէ առաջնորդուած՝ գնաց անապատ, ուր քառասուն օր փորձուեցաւ Սատանայէն: Այդ օրերուն ո՛չ կերաւ եւ ո՛չ ալ խմեց: Երբ քառասուն օրերը ամբողջացան, Յիսուս անօթեցաւ:

Սատանան ըսաւ իրեն.

– Եթէ Աստուծոյ Որդին ես, հրամայէ՞ որ այս քարը հաց դառնայ:

Յիսուս պատասխանեց.

– Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքերով»:

Ապա Սատանան հանեց զինք բարձր լեռ մը եւ ակնթարթի մը մէջ իրեն ցոյց տուաւ աշխարհի բոլոր քագաւորութիւնները եւ ըսաւ.

– Այս բոլորին վրայ իշխանութիւն եւ անոնց փառքը քեզի կու տամ: Անոնք ինձի տրուած են եւ որու որ ուզե՞մ կու տամ: Արդ, եթէ ինձի երկրագութիւն ընես՝ այդ բոլորը բուկդ պիտի ըլլան:

Յիսուս ըսաւ.

– Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Քու Տէր Աստուծոյդ պէտք է երկրագագիս եւ զայն միայն պաշտես»:

Յետոյ Սատանան զայն Երուսաղէմ տարաւ եւ կանգնեցուց տաճարի աշտարակներէն մէկուն վրայ եւ ըսաւ անոր.

– Եթէ Աստուծոյ Որդին ես, դուն քեզ այստեղէն վար նետէ: Քանի Սահմուններուն մէջ գրուած է, թէ «Աստուծ իր հեթանոսակներուն պիտի պատուիրէ որ քեզ պահպանեն» եւ, թէ «հեթանոսակները քեզ իրենց ձեռներուն վրայ պիտի վերցնեն, այնպէս որ ոտքդ քարի չզարնուի»:

Յիսուս պատասխանեց.

– Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Քու Տէր Աստուծածդ չփորձե՞ն»:

Սատանան ամէն տեսակի փորձութիւն վերցացնելէ ետք՝ ժամանակուան մը համար հեռացաւ Յիսուսէն:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԲԱՐԻՔ ՀՆԵՆՔ ՄԵԶ ԱՏՈՂՆԵՐՈՒՆ

«Բարիք ըրէկ ձեզ ատողներուն...» (Մտք. 5.44): Երբ մեզի հանդէպ դառնութեամբ եւ ատելութեամբ լեցուած մարդոց բարիք կ'ընենք, մեր բարիքը անոնց դիմաց կ'ըլլայ նամբայ մը զիրենք Աստուծոյ առաջնորդող եւ զԱստուծ իրենց բերող: Մեզ ատողին բարիքը ընելը դիւրին բան չէ: Կրնա՞նք փաթթել վերքը մէկու մը, որ կը սիրէ մեզ վիրաւորել: Կրնա՞նք ողորմութիւն տալ կամ կերակրել մէկու մը, որ մեզ նախապէս կողոպտած է: Ճշմարտապէս քրիստոնեայ եղող մարդը միայն կրնայ նման բան ընել: Բարեգործութիւնը ատող մարդիկը կը վերածէ սիրող մարդոց: Սրտէ բխած բարեգործութեան դիմաց հրէշն անգամ հրեշտակ կ'ըլլայ:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՈԹԵՆՔ

Ծնորհըներդ սիրէ' անդամներուս վրայ, Տէ՛ր, լեցո՞ւր մարմինս արիութեամբ ու ժուժկալութեամբ եւ հոգիս՝ երկիւղով ու դողով, սիրտս՝ սիրով ու արդարութեամբ, միտքս՝ Զու լոյսովդ ու իմաստութեամբ եւ խորհուրդներս՝ Զու գիտութեանդ հանճարով. [զօրացո՞ւր] ոտքերս՝ որ արդարութեան շալիղով երթան, ձեռքերս՝ բարին գործեն, բերանս՝ գոհութեամբ եւ օրինութեամբ անդադար Զեզ սաղմոսէ, աչքերս՝ յորդարուիս արտասուեն, հոտոտելիքս՝ կեանքի գիտութեան բոյրը զգայ, եւ ականշներս՝ լսեն աւետեաց ծայլսը, որ կ'ըսէ. «Թողուա՛ծ ըլլան քեզի քու բոլոր մէղքերդ»:

Ե.Ա.ՍՈՐԻ